

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՄԻ ՎԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

№-Ե -03/221

«12» 11. 2019թ

ԼՈՒՈՒ ՄԱՐԶԴԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ներկայացնում եմ Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 34-Ա, 35-Ա, 36-Ն, 37-Ա և 38-Ա որոշումները:

Առդիր 28 էջ:



Համայնքի ղեկավար

Ա.Երանոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ**

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հեռ. 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
„08” նոյեմբերի 2019 թվականի N38-Ն

**ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 44-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, „ՀՀ բյուջետային համակարգի մասին” ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածի 3-րդ մասով Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է .

1. Շիրակամուտ համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 24-ի „Շիրակամուտ համայնքի 2019թ. բյուջեն հաստատելու մասին” թիվ 44-Ն որոշման մեջ կատարել հոդվածի փոփոխություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ / 4 /	դեմ / 0 /	ծեռնալստ / 0 /
Ա. Կյուրեղյան			
Հ. Նալբանդյան			
Ն. Նասյան			
Ա. Պապոյան			

Համայնքի ղեկավար՝



Ա. Երանոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրականուտ համայնք, հեռ. 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

„08” նոյեմբերի 2019թվականի N37 -Ա

**ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 17-ի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրականուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Շիրականուտ համայնքի բնակիչների դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Շիրականուտ համայնքի ավագանին որոշում է.

- 1.. Շիրականուտ համայնքի 2019թ. բյուջեի 10.7.1 դասակարգման 4729 հոդվածից հատկացնել դրամական օգնություն՝ թվով 4 բնակչի՝ յուրաքանչյուրին 30000,0/երեսուն հազար/դրամ, համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակիչներին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ / 4 /	դեմ / 0 /	ծեռնպահ / 0 /
Ա. Կյուրեղյան			
Հ. Նալբանդյան			
Ն. Նասյան			
Ա. Պապոյան			



Համայնքի ղեկավար՝


Ա. Երանոսյան

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

- 1. Պապիկյան Արման Հենրիկի --երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/.
- 2. Բզիթխանյան Լուսյա Խաչատուրի - երեսուն հազար դրամ, /սոց օգնություն/.
- 3. Ափիկյան Էլմիր Վարդևանի - երեսուն հազար դրամ, /սոց օգնություն/.
- 4. Նալբանդյան Ռոբերտ Մերուժանի - երեսուն հազար դրամ, /սոց օգնություն/.

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Հ.ԵՐԱՆՈՍՅԱՆ

Ընտանիքի անուն	Տարի	Գում	Կատարող





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հեռ. 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

„ 08 ” նոյեմբերի 2019 թվականի N36-Ն

**ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի ԹԻՎ 6-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 10.10.2019թ. թիվ 01/107.4/07564-19 գրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 34-րդ հոդվածի 4-րդ մասով, Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Լրացումներ կատարել Շիրակամուտ համայնքի ավագանու 06.02.2018թ. „Շիրակամուտ համայնքի 2018-2022թ.թ սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին ” թիվ 6-Ն որոշման հավելվածում`

1) Հնգամյա զարգացման ծրագրի „2. Համայնքի իրավիճակի նկարագրություն” բաժնի 2.6 ենթակետից հետո լրացնել „2.7 Աղետների ռիսկերի կառավարում” բաժնի ենթակետը և հաստատել նոր խմբագրությամբ հնգամյա զարգացման ծրագիրը` համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ծեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ն.Նասյան			
Ա.Պապոյան			



Ա.Երանոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶ**

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հեռ. 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ


„08” նոյեմբերի 2019 թվականի N35-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 33-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Նորմատիվ իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, „Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

Շիրակամուտ համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 16-ի „Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող 06-087-0065-0015 ծածկագրով 0, 08042 հա հողամասը աճուրդով օտարելուն համաձայնություն տալու մասին” թիվ 33-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ նշված „բնակելի կառուցապատման” բառերը փոխարինել բնակավայրերի այլ” բառերով:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ / 4 /	դեմ / 0 /	ծեռնպահ / 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ն.Նասյան			
Ա.Պապոյան			



Ա.Երանոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հեռ. 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

„ 08” նոյեմբերի 2019 թվականի N34-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „ Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2019թ. նոյեմբերի 8-ի հերթական նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1. Շիրակամուտ համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 33-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Շիրակամուտ համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 6-ի թիվ 6-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
3. Շիրակամուտ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու մասին:
4. Շիրակամուտ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 44-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ծեռնպահ/ 0 /
Ա. Կյուրեղյան			
Հ. Նալբանդյան			
Ն. Նասյան			
Ա. Պապոյան			



Ա. Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՐՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2018-2022թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար - Ա.Երանոսյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 08.11.2019թ-ի թիվ 36 -Ն
որոշմամբ

(Նոր խմբագրություն)

Բովանդակություն

1. Ներածություն
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն
 - 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.
 - 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը
 - 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը
 - 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները
 - 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ
 - 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն
 - 2.7. Աղետների ռիսկերի կառավարում
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
 - 3.1. Համայնքի զարգացման տեսլական
 - 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ
4. ՀՀԶԾ ֆինանսավորում
5. ՀՀԶԾ մոնիթորինգ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի 2018-2022թթ. հնգամյա զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2022 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և համայնքի տեսլականի իրականացում:

Գալիք հինգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են

- *Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը*
- *Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը*
- *Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը*
- *Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.*
- *Բարելավել համայնքի ֆինանսական կարողությունը*
- *Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները*
- *Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը*
- *Նոր աշխատատեղերի ստեղծում*
- *Համայնքում առկա հիմնախնդիրները*
 - *Բնակչության սոցիալապես անապահով վիճակ /70%-80%/*
 - *Առկա գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների մաշվածություն*
 - *Փոքր հողակտորների և ոչ ճիշդ օգտագործման արդյունքում ուժասպառված հողերը*
 - *Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի մաշվածության / նոր ջրագծի կառուցում/*
 - *Արտարվայրերի ճանապարհների անմխիթար վիճակ, բացակայություն-*
 - *Աշխատատեղերի բացակայություն*
 - *Ներհամայնքային ճանապարհներ և գիշերային լուսավորության կառուցում*

- Արտարավայրերում խմոցների տեղադրում
- **Լուծման ուղիները**
 - Օրենքների փոփոխություններ
 - Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներկրում
 - Աշխատատեղերի ստեղծում
 - Իրավագիտական ծառայությունների մատուցում
 - Հանարային մասնակցություն
 - Համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպություններ հետ

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

• 2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Շիրակամուտ գյուղը գտնվում է Լոռու մարզում, Սպիտակի նախկին շրջանի վարչական տարածքում՝ Փամբակ գետի վերին հովտում, սահմանակից է Գեղասար, Կաթնաջուր, Մեծ Պարնի, Գոգարան գյուղերին: Այստեղով է անցնում Կանաձոր Գյումրի խճուղային ճանապարհը և երկաթգիծը՝ Նալբանդ կայարանով: Գյուղը հիմնադրվել է 1829թ. ներկայիս տեղում: Ծովի մակերևույթից բարձր է 1670մ, վարչական տարածքը կազմում է 2668,19հա, որից գյուղի բնակատեղը՝ 140հա: Տարվա եղանակներից անհամեմատ լավն է աշունը, ձմեռը երբեմն խստաշունչ է, գարունը սովորաբար ուշացած է գալիս, իսկ ամառը տաք է՝ հաճախակի քամիներով:

Տարեկան տեղումները քիչ են, իսկ վերջին տարիներին նկատվում է, որ ձյուն քիչ է գալիս: Լինում է նաև կարկտահարություն:

Գյուղը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում, հաճախակի են լինում երկրաշարժերը: Հիշարժան են 1926թ. և 1988թ. երկրաշարժերը: Վերջինիս էպիկենտրոնը Շիրակամուտ-Նալբանդ գյուղն էր:

- ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄ

Համայնքի բնակչության թիվը՝

առկա – 2447,
այդ թվում՝
կանայք –1221 տղամարդիկ – 1226
Բնակչության տարիքային կազմը՝
0-1 տարեկան – 21
1-2 տարեկան – 26
3-4 տարեկան - 34
5-6 տարեկան -32
7-10 տարեկան – 101
11-14 տարեկան - 62
15-17 տարեկան - 58
18-22 տարեկան - 238

23-45 տարեկան - 795

46-62 տարեկան - 688

63 և ավելի 392

Սոցիալական կազմը, այդ թվում՝

թոշակառուներ - 427

միակողմանի ծնողազուրկ երեխաներ - 2

հաշմանդամներ - 86, որից՝

6-15 տարեկան - 2,

ընտանիքների (ծխերի) թիվը - 644

• **ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

Համայնքի ավագանու անդամների թիվը - 7

համայնքի ղեկավարի աշխատակազմում ընդգրկված են 2 հայեցողական պաշտոն, 8 համայնքային ծառայող; Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը (հավելված 1):

Շիրակամուտ համայնքում գործում են համայնքային ենթակայության թվով 2 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ՝ „Շիրակամուտի համայնքի Արևիկ նախադպրոցական ուսումնական հաստատություն” և երաժշտական դպրոց՝ 16 աշխատատեղով: Այդ ՀՈԱԿ-ների անվանումները և աշխատակիցների թիվը կներկայացվի ըստ ոլորտների: Համայնքում գործում է 1 փակ բաժնետիրական ընկերություն՝ «ԶՕԸ» ՓԲԸ,

Համայնքային ծառայությունն առավել որակյալ դարձնելու համար անհրաժեշտ է՝

- կազմակերպել ավագանու գործունեությունն առավել արդյունավետ՝ ապահովելով բազմակարծության և բացարձակ թափանցիկության աշխատանքային միջավայր
- ավագանու նիստերի ընթացքում լսել ՀՈԱԿ-ների տնօրենների, քաղաքացիների ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների ղեկավարների հաշվետվությունները
- համայնքային աշխատողների պարբերական վերապատրաստումներ՝ փոխանակման և փորձի փոխանակման ծրագրեր,

• թարմացնել համայնքապետարանի կայքը՝ այն դարձնելով ինտերակտիվ՝ բնակչության հետ կապը դարձնելով առավել արդյունավետ,

• «Մալբերի» համակարգի միջոցով աշխատակազմի աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ հասնել ավելի արագ և որակյալ համայնքային ծառայության մատուցմանը,

• բնակիչ-ՏԻՄ համագործակցության ընթացքում հերթերից և ժամանակի կորստից խուսափելու նպատակով առավել ընդլայնել էլեկտրոնային ծառայությունների օգտագործումը, սեփական ռեսուրսներով մատուցվող ծառայությունների մշակում և սպասարկում,

• ելնելով համայնքապետարանի դահլիճի հնարավորությունից՝ ապահովել բնակիչների մասնակցությունը իրենց հուզող հարցերի քննարկմանը:

• **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ և ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

Համայնքի վարչական տարածքը 2668,2 հա է, որից համայնքային սեփականություն հանդիսացող հողերն են՝ 1891,44 հա:

Ըստ նպատակային նշանակության՝

Գյուղատնտեսական – 2209,38 հա, որից համայնքային սեփականություն – 1817,86 հա, բնակավայրերի – 117,41 հա,

արդյունաբերական և արտադրական շինությունների հողեր-35,62հա,որից համայնքային սեփականություն-24,22

ընդերքօգտագործման հողեր – 4,55 հա,

ճանապարհների հողեր-26,80հա,

առողջապահական,հանգստավայրերի,մարզական ու պատմամամշակութային, հողեր -5,49հա,որից համայնքային սեփականություն3,05հա

անտառային – 199,61 հա,

ջրային ֆոնդի հողեր – 21,39հա, որից համայնքային սեփականություն – 2,1 հա:

այլ հողեր – 52,49հա,որից համայնքային սեփականություն -44,21հա

Գյուղի ճարտարապետական կերպարը բնորոշող եկեղեցիները՝ Չիչխանի ժամը և գյուղի կենտրոնական մասում գտնվող եկեղեցին, 1988թ.երկրաշարժից մեծ վնաս են կրել և հիմնովի ավերվել էին:2015թվականին Չիչխանի ժամը՝ ֆրանսիացի բարերարների կողմից վերականգնվեց և վերանվանվեց „Չիչխանավանք”,իսկ գյուղի կենտրոնում գտնվող եկեղեցին վերականգնման կարիք ունի:

2008թվականին գյուղում իրականացվել է մեծամասշտաբ բնակարանաշինություն, պետական աջակցությամբ կառուցվել են երկրաշարժից անօթևան մնացած

ընտանիքների բնակարանները, սակայն մինչ այսօր անօթևանության և գյուղը

ժամանակավոր կացարաններից ազատելու խնդիրները համարվում են առաջնային:

Գյուղում առկա են վթարային բնակարաններ , որոնք պահանջում են հրատապ լուծում:

•ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրաապահովվածության պայմաններով համայնքը գտնվում է տնտեսական

նպատակներով օգտագործման համար պիտանի ստորգետնյա ջրերով ապահովված

գոտում: Ջրամատակարարման համար օգտագործվում է “Բանդի ձոր”, „ Մագոյի յուրտ” ,

„Ղարախան” ակունքները: Որպես ոռոգման ջուր օգտագործվում է „Չիչխան” գետի

ջուրը: Այսպիսով, խմելու ջրի պաշարներով ապահովվածությունը բարենպաստ է:

Անբարենպաստ է գոյություն ունեցող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի

տեխնիկական վիճակը: Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է դեռևս 1957

թվականին ապա 1975 թ.ին,իսկ 1988թ.երկրաշարժից հետո նորացվել է ներքին ցանցի

35%-ը;Խմելու ջրի ներքին ցանցի մաշվածությունն այնքան մեծ է,որ ջրի կորուստը

հասնում է 50%-ի: Խմելու ջրի մատակարարումը հաճախ կատարվում է ընդհատումներով

՝ ջրամատակարարման ցանցի մաշված հատվածների պատճառով: : Համայնքում առկա է ջրամատակարարման համակարգի գործող օրվա կարգավորիչ ջրամբարը:

Կա կոյուղու ցանց 3կմ երկարությամբ,որն առայժմ չի գործում մաքրման կայանի բացակայության պատճառով

Էներգամատակարարում

Շիրակամուտ համայնքի էներգահամակարգը կառավարվում է «Հայաստանի էլ.ցանցներ

ընկերության կողմից: Լուսավորվում է գյուղի միայն Հայկական և Կրասնոդարյան

փողոցները: Իսկ մնացած փողոցները եվս լուսավորության կարիք ունեն: Համայնքի գազամատակարարումը իրականացվում է «Գազպրոմ – Արմենիա» ընկերության կողմից : Շիրականուտում գազաֆիկացվել է 353 առանձնատուն:

Աղբահանություն,

Համայնքում համայնքապետարանի կողմից իրականացվում են աղբահանության աշխատանքներ , տեղադրված են աղբամաններ և աղբի հավաքումը կատարվում է աղբահավաքման մեքենայի շրջայցերի միջոցով :

• ԲՆԱԿՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 452 առանձնատուն՝ 41858մ² ընդհանուր բնակելի մակերեսով:

Համայնքում լուրջ խնդիր է տնակային պայմանների գոյությունը: Համայնքում ժամանակավոր կացարաններում /վագոն տնակներում/ բնակվում են մոտ 22 ընտանիք:

• ՏՐԱՆՍՊՈՐՏ 'ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրականուտ համայնքը գտնվում է տրանսպորտային ցանցով առավել ապահովված գոտում: Շիրականուտով է անցնում Վրաստանին, Ռուսաստանին (Երևան-Գյումրի-Վանաձոր-Թբիլիսի-Բաթումի-Փոթի, նաև դեպի Մոսկվա) կապող երկաթուղին: Զարգացած է նաև ավտոմոբիլային ճանապարհների ցանցը: Շիրականուտի միջով անցնում է Գյումրի-Վանաձոր-Իջևան-Աղբբեջան և Շիրականուտ –Սպիտակ- Ապարան-Երևան սահմանների միջպետական նշանակության ավտոճանապարհները: Համայնքը շրջակա բնակավայրերի հետ կապված է տեղական նշանակության ճանապարհներով: Համայնքում գրանցված է 200 անձնական ավտոմեքենաներ:

• ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՀՈԳԱՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է համայնքային ենթակայության 1 գրադարան և 1 մշակույթի տուն: Համայնքապետարանի գրադարանում առկա գրքերի քանակը կազմում է 1600կտոր և այն ունի ժամանակակից ընթերցողական գրականության կարիք: Համայնքապետարանի ենթակայության տակ գործում է երաժշտական 1 դպրոց՝ 37 աշակերտով, որը գործում է մանկապարտեզի շենքում: Համայնքում գործում է „Վերածնունդ“ պարային համույթը, որը մասնակցել է բազմաթիվ փառատոների և արժանացել մրցանակների:

Համայնքում կա 2 սպորտհրապարակ՝ չհաշված դպրոցների: Ֆուտբոլի խաղադաշտը վերանորոգման կարիք ունի, որտեղ անցկացվում են տարածքային մրցումներ:

Համայնքում գործում է Հայ Ավետարանչական եկեղեցու հոգևոր կենտրոնը, որտեղ զգալի աշխատանքներ են կատարվում ազգաբնակչության հոգևոր դաստիարակության գործում, կազմակերպվում է ամառային շուրջօրյա ճամբար, պայքար է տարվում աղանդների դեմ:

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Նկարագրել համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակն, անդրադառնալով հետևյալ հարցերին.

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն- 55945,4հազ.դրամ
- ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը - (%),
- Համայնքի տարածքում առկա են հետևյալ արդյունաբերական ձեռնարկությունները՝
Ձկնաբուծարան - 2, որոնք չեն աշխատում
- Ավազի և խճի հանքավայր -1,գործում է
- Համայնքի տարածքում հիմնական ծառայություններն են՝
Խանութներ- 9, զբաղված են առևտրով
Բենզալցակայան -1
Համայնքը համարվում է գյուղատնտեսական՝
Դաշտավարություն
Անասնապահություն
Արտադրվող հիմնական գյուղատնտեսական մթերքներն են՝ կարկոֆիլ , ցորեն, գարի, բանջարաբոստանային կուլտուրաներ, պտուղ

• ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- Համայնքում գործում են կրթական հաստատություններ, որից՝

Միջնակարգ դպրոց - 32 աշխատատեղ և 121 աշակերտ
հիմնական դպրոց –19 աշխատեղ և 41 աշակերտ,

- Համայնքում գործում է համայնքային ենթակայության 1 մանկապարտեզ:

Մանկապարտեզ հաճախում են 17 երեխա: Աշխատում են 5 աշխատակից, որից մանկավարժներ են 2-ը (հավելված): Մանկապարտեզը վերանորոգվել է մասնակի և լրիվ վերանորոգման կարիք ունի; Մանկապարտեզում առկա է ջեռուցման համակարգի բացակայություն,գույքի մաշվածություն: Մանկապարտեզը ունի բակի բարեկարգման և խաղահրապարակի կառուցման կարիք :

• ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է մեկ առողջության կենտրոն/բուժակ կետ/, որը գտնվում է շատ բարվոք վիճակում: Շենքը կառուցվել է երկրաշարժից հետո Շվեյցարական Կարմիր խաչի կողմից: Ազգաբնակչության բուժապասարկման գործով զբաղվում են 1 բժիշկ և 2 բուժքույրեր: Հանրապետությունում առողջապահության համակարգի արմատական փոփոխության պատճառով փակվել է ծննդատունը, որով էլ պայմանավորված է բժշկական վատ սպասարկումը:

Առողջության կենտրոնը ապահովված է խմելու ջրով:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքների թիվը՝ – 174

2.3 Համայնքում իրականացվող ծրագրեր

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող ծրագրերն անհայտ է:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

	ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	2017	2018	2019	2020	2021	2022
Ա.	ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	56075,4	55945,4	56700.0	56890.0	57750.0	58960.0
1.	Հողի հարկ	4339,7	4324,5	4500.0	4700.0	4900.0	5000.0
2.	Գույքահարկ	4598,0	4598,0	4600.0	4800.0	4900.0	5100.0
3.	Վարձավճար	1242,0	1266,8	1300.0	1400.0	1500.0	1600.0
4.	Տեղ. տուրք	600,0	600,0	650.0	700.0	750.0	800.0
5.	Այլ եկամուտներ	4482,3		3400.0	3550.0	3750.0	3950.0
6.	Մուտքեր հողի օտարումից	0	0	800.0	850.0	950.0	970.0
7.	Ընդամենը սեփ. եկամուտներ	13661,4	12098,6	13050.0	13900.0	14750.0	15600.0
8.	Դոտացիա	42414,0	43846,8	44300.0	44600.0	44900.0	45000.0
Բ.	ԾԱԽՍԵՐ	56075,4	55945,4	56000.0	56900.0	57700.0	58500.0
1.	Կառավ. ապարատ. ծախսեր	28429,0		28000.0	28100.0	28200.0	29300.0
2.	Գյուղատնտեսություն	150,0	120,0	120.0	130.0	140.0	150.0
3.	Տրանսպորտային կապ	720,0	720,0	1600.0	1700.0	1800.0	1900.0
4.	Բնակ. շինություն	2400,0	2400,0	1900.0	1950.0	2000.0	2100.0
5.	Հանգիստ, մշակույթ, կրոն	200,0	150,0	160.0	170.0	180.0	190.0
6.	Կրթություն	20300,0	21220,0	21300.0	22000.0	22500.0	23000.0
7.	Սոցիալական պաշտպան.	1100,0	1160,0	1250.0	1300.0	1400.0	1500.0
8.	Այլ խմբեր /պահուստային/	2776,4	1746,4	2900.0	3000.0	3100.0	3200.0

2.5. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Շիրակամուտ համայնքի առջև ծառայած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 60%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

- Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,

- ֆինանսի բացակայությունը

- Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝

- Ֆինանսական սղությունը,

- Նախադպրոցական կրթության կազմակերպման խոչընդոտներն են ծնողական ներդրումների դժվարությունները:

- Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

.մշակութային կյանքի պասիվությունը,.

• Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

.գործազրկությունը,

.ծայրամասային թաղամասերի գազաֆիկացման բացակայությունը

• Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

մարզահրապարակ և մարզագույք չունենալը,

• Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ .համայնքաբնակների աղքատությունը,

• Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների պահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

.ջրմուղ-կոյուղու բացակայությունը,

.խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,

.միջոցների սղությունը,

.փողոցային լուսավորության բացակայությունը:

• Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

.միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայված վիճակը,

• Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,

.սեյսմիկ գոտում գտնվելը,

.աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,

.համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

• Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.որակյալ սերմի բացակայությունը,

.սպառման շուկայի դժվար հասանելիությունը,

• Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.հեղեղատարների բացակայությունը,

.աղբահեռացում չկազմակերպելը,

• Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

- .երիտասարդների միգրացիան,
- Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
 - .երիտասարդների չամուսնանալը,
 - .երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,
 - .պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,
 - Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմաններ իստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝
 - .բնակչության իրազեկվածության պակասը,.բուժ-գործիքների պակասը,.նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը,.անվճար բուժ սպասարկման քիչ լինելը,.ջեռուցման բացակայությունը
 - Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
 - .համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,
 - Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչընդոտող գործոններն են՝
 - .հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,
 - .ինտերնետ կապի անորակությունը,
 - .տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,
 - Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
 - .համայնքի երիտասարդների կամավորության պակասը,
 - .հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,
 - .տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ,որից գյուղացիները կորցնում են բերքի 40%-ը,

բ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռքբերելու,

գ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

ե/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

զ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

է/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ , ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների հասնելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին միջավայրի կողմից ընձեռնված հնարավորությունների և սպառնալիքների գնահատում և SWOT (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմերը	Համայնքի Թույլ կողմերը
<ul style="list-style-type: none">• Երկաթուղային Նալբանդ կայարանը• Բնակլիմայական զով պայմաններ• Ոռոգման ջրի ինքնահոս ցանցի առկայություն• Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայություն• Համայնքի գազաֆիկացվածության բարձր աստիճան• Միջքաղաքային վանաձոր -Գյումրի Խճուղային ճանապարհ• Գազաֆիկացում	<ul style="list-style-type: none">• Բնակչության սոցիալ տնտեսական պայմանների ցածր մակարդակ• Բնակլիմայական ցուրտ պայմաններ• Արտագաղթի բարձր մակարդակ• Տնակային պայմաններում ապրող ընտանիքներ• Խմելու ջրի և ջրահեռացման համակարգերի վերանորոգման անհրաժեշտություն• Հեղեղատարների և ջրահեռացման համակարգի վատ վիճակ<ul style="list-style-type: none">• Անբարեկարգ փողոցների առկայություն• Համայնքում կիսակառույցների առկայություն• Վթարային շենքերի առկայություն և տարածքի սեյսմիկ անկայունություն• Համայնքային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքիթարմացման անհրաժեշտություն
Հնարավորությունները	Սպառնալիքները
<ul style="list-style-type: none">• Համայնքի աշխարհագրական դիրքը• Զբոսաշրջության զարգացում• Հեռանկարային ծրագրերի մշակման հնարավորություն	<ul style="list-style-type: none">• Գործազրկության բարձր մակարդակ• Աղքատության բարձր մակարդակ• Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ• Տարածքի սեյսմիկ անկայունություն• Համայնքի զարգացման հեռանկարի նկատմամբ բնակիչների անվստահության• Գյուղատնտեսության զարգացման անհնարինություն

2.7 ԱՂԵՏՆԵՐԻ ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Իրավիճակի գնահատում

Համայնքի կայուն զարգացման համար աղետների ռիսկերի գնահատումը և կառավարումը կարևորագույն պայմաններից է:

Կլիմայի հետ կապված աղետները՝ կարկտահարությունը և երաշտը զգալի վնաս են հասցնում համայնքի տնտեսությանը: Հաճախակի դարձած կարկտահարությունների պատճառած վնասները նվազեցնելու համար հակակարկտային կայան տեղադրելու անհրաժեշտություն կա:

Վերջին շրջանում համայնքում շատացել են անտառային և խոտածածկ տարածքների հրդեհների դեպքերը, որոնց կանխարգելման համար՝ անհրաժեշտ է բնակչության շրջանում բացատրական աշխատանքներ տանելու անհրաժեշտություն կա:

Հիմնախնդիրներ, նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Հրդեհների դեմ պայքարելու համար հրդեհների մարման համար նախատեսված սարքավորումների ձեռք բերում:
- Հրդեհների դեպքում մարդկային գործոնը բացառելու նպատակով պլակատների և բրյոշուրների ձեռք բերում:

• 3. **Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում**

3.1 Համայնքի զարգացման տեսլականը

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,

- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
- Համայնքի գույքը կառավարել:
- նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
- Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
- Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
- Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
- Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
- Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,
- Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
- Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
- Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
- Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
- Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
- Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
- Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
- Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
- Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
- Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

4. Համայնքի զարգացման ծրագրի ֆինանսավորումը

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է/ըստ անձնագրերի, հավելվածներ 2-7/

1. ԱՐԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ –իրականացվում է համայնքի ներդրումներով:

2.ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ –իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով

3. ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ - իրականացվում է է համայնքի բյուջեի միջոցներով:


4.ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ- ԾԻԳ-ի միջոցով

5.ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԲԱԿՈՒՄ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ և ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ- իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով:

6.,ԱԼՄԱԼՈՒ"ՀԱՆԴԱՄԱՍ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ- իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով

5. ՀՀԶԾ-ի մոնիթորինգը - իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը,բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը : Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագրի նակատմամբ իրականացված մոնիտորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում՝ ըստ տարիների և թիրախային արժեքների:

Հավելված 1



Հավելված 2

Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Շիրակամուտի համայնքային ճանապարհների բարեկարգում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ունենալ բարեկարգ ճանապարհներ և վերանորոգված ջրհեռացման առուներ						
	Ցուցանիշներ ճանապարհի բարեկարգում՝ քառ.մ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2017	2018	2019	2020	2021	2022
0	5400	3400	2900	2900	2900		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	• Վերանորոգված ջրհեռացման առուներ ունենալ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2017	2018	2019	2020	2021	2022
	Վերանորոգված ջրահեռացման առուների վերանորոգում գմ	0	1600	200	100	0	0
	• Բարեկարգ ճանապարհ ունենալ						
Ցուցանիշներ ճանապարհների շեբենապատում քառ.մ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
2017	2018	2019	2020	2021	2022		
0	5400	2900	2900	2900	2900		
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Չափագրում 1.2. Նախագծի պատվիրում 1.3. Ֆինանսական միջոցների հայթայթում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ձեռք բերել անհրաժեշտ նյութեր՝ տեղական գրունտից 2.2. Ճանապարհների շեբենապատում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0,8մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 11մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 11,8մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Շիրակամուտ համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2018թ.- Ավարտ՝ 2022թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում ներկայումս ճանապարհների վիճակը վատ է և ծրագրի իրականացումը կապահովի համայնքաբնակներին ունենալ բարեկարգ ճանապարհներ:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 2

« Փողոցների լուսավորություն»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Շիրակամուտ համայնքում ապահովել փողոցային լուսավորություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Ունենալ գեղեցիկ և լուսավոր համայնք						
	Ցուցանիշներ Փողոցային լուսավորության կետերի ավելացում/մ/	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2017	2018	2019	2020	2021	2022
		0	2300	4100	3800	1400	1000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	• Լուսավորման կետերի ավելացում						
	Ցուցանիշներ՝ լուսամփոփների հաղորդալարերի և հենասյուների ձեռք բերում/հատ/	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2017	2018	2019	2020	2021	2022
		0	46	58	40	26	15
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. լուսամփոփների ձեռք բերում 1.2. հաղորդալարերի ձեռք բերում 1.3 հենասյուների ձեռք բերում 1.4. փողոցային լուսամփոփների տեղադրում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 400000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 14,9 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 15,3 մլն դրամ:						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Շիրակամուտ համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի իրականացման արդյունքում Շիրակամուտ համայնքում նախատեսվում է բոլոր փողոցների լուսավորության ապահովում և ունենալ գեղեցիկ ու լուսավորված համայնք:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 3

« Աղբահանություն»

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Պահպանել փողոցների սանիտարական վիճակը						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքում մաքուր և բարեկարգ փողոցներ ունենալ,ավելացնել աղբահորերը						
	Ցուցանիշներ Մ ³	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2017	2018	2019	2020	2021	2022
			360	360	380	380	400
Ծրագրիմիջանկյալ արդյունքներ	• Աղբարկղերի ձեռք բերում և աղբի տեղափոխում						
	Ցուցանիշներ Աղբարկղեր/հատ /	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2017	2018	2019	2020	2021	2022
			22	10	10	5	5
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Աղբարկղերի պատվիրում 1.2. Մեխանիզացիա աղբը տեղափոխելու համար						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝124000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 550000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 6740000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Շիրականուտ համայնքի բոլոր բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2018թ.- Ավարտ՝ 2022թ.						
Ծրագրիհամառոտ նկարագրություն	Այժմ համայնքը գտնվում է հակասանիտարական վիճակում, և ծրագրի իրականացումից հետո համայնքը կունենա մաքուր և բարեկարգ փողոցներ:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 4

<<Մանկապարտեզի բակում խաղահրապարակի և շենքի վերանորոգում»

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Մանկապարտեզի երեխաների հաճախելիության բարձրացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ապահովել երեխաների ուրախ ժամանցը:						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2017	2018	2019	2020	2021	2022
		-	400	-	-	-	-
Խաղահրապարակ մ ²	-	400	-	-	-	-	
Շենք /մ ²	-	200	754	-	-	-	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ունենալ գեղեցիկ խաղահրապարակ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2017	2018	2019	2020	2021	2022
		-	400				
	Խաղահրապարակ մ ²	-	400				
	2. Ունենալ վերանորոգված և հարմարավետ մանկապարտեզ						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2017	2018	2019	2020	2021	2022	
	-	200	754				
Շենք մ ²	-	200	754				
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. նախագծային փաստաթղթերի պատվիրում</p> <p>1.2. Անհրաժեշտ շինանյութի ձեռք բերում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Մանկապարտեզի շենքի պետական գրանցում</p> <p>2.2 Ֆինանսական միջոցների և անհրաժեշտ շինանյութի ձեռք բերում</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 400 հազ դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 15մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 15.4մլն դրամ՝</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	չկան						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2018թ.- Ավարտ՝ 2019թ. վերջ						
Ծրագրի համառոտ նկարագրություն							

Հավելված 6

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 5

« Ներհամայնքային գազաֆիկացում»

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գազաֆիկացում					
Ծրագրի անմիջական նպատակ	Բնակչությանն ապահովել բնական գազով					
	Ցուցանիշներ զ/մ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2017	2018	2019	2020	2021
-	440	200	-	-	-	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.					
	Ցուցանիշներ Նախագծային փաստաթղթերի կատարում/հազ.դրամ/	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2017	2018	2019	2020	2021
	-	400	300	-	-	-
	2.					
	Ցուցանիշներ Գազաֆիկացման արժեքը/մլն.դրամ/	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
2017		2018	2019	2020	2021	2022
-	4,5	1,8				
Ծրագրի հիմնական գործողությունները	նախագծային փաստաթղթերի պատվիրում					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 700 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 6,3 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 7,0 մլն դրամ:					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	-					
Ծրագրի հիմնական ռիսկերը	չկան					
Ծրագրի հիմնական շահառուները	համայնքի բնակիչները:					
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2018թ.- Ավարտ 2019թ.վերջ:					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի բնակիչները կապահովվեն գազով					

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 6

«Ալմալու» հանդամաս տանող ճանապարհի վերանորոգում

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	ճանապարհի վերանորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ գ/մ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		600	3500	5300	-	-	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1						
	Ցուցանիշներ նախագծային փաստաթղթերի կատարման /հազ.դրամ/	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2018	2019	2018	2019
	220	-	-	-	-	-	
	2.						
Ցուցանիշներ ճանապարհի արժեքը/մլն.դրամ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
2018	2019	2018	2019	2018	2019		
0,4	1,2	2,7	-	-	-		
Ծրագրի հիմնական գործողությունները	Նախագծային փաստաթղթերի պատվիրում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր` 220 հազար դրամ Կապիտալ ծախսեր` 4.3 մլն դրամ Ընդհանուր բյուջեն` 4.52 մլն.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	--						
Ծրագրի հիմնական ռիսկերը	չկան						
Ծրագրի հիմնական շահառուները	համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ` 2018թ.-Ավարտ 2020թ. վերջ						
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Համայնքի բնակիչները կապահովեն իրենց հողամասերի մշակման աշխատանքները:						